դամանքներ պիտի լինեին, որ թելադրեին խանին այդպիսի հաստատման տալաղա տալուց հրաժարվելու[16]։ Մահալական մելիքները ըստ Մոգիլևսկու և Երմոլով 2-րդի, ունենում էին միներաշի տիտղոսը. օրինակ՝ Տաթևի մելիք Պողոսը, Կյուպարայի մելիք Փարսադանը։ Թվում է թե մելիքը պաշտոնի էր մրցանում մի ուրիշ եկեղեցական ծիսակատարությամբ. գոնե հայտնի է, որ երբ իմացվեց, որ մտադրություն կա մելիքական կառավարությունը վերացնելու, Հան սենատորի կողմից մշակվող օրինագծի հիման վրա, Հալիձորի մելիք Հովհաննեսը Մելիք-Փարսադանյանների տոհմից շտապեց 1838 թ. վերջում ինքը իր ձեռքով մելիք օրհնել տալ եկեղեցում պատարագից հետո հատուկ ավանդական ծիսակատարություններով իր սիրած որդի Գալուստին, սուրը կապեց նրա մեջքին և նստեցրեց մելիքական աթոռի վրա[17]։ Այս օրինակը վկայում է, որ մելիքը օրհնվում էր և մելիքը աթոռի վրա էր նստեցվում հանդիսավորությամբ, սակայն պիտի կարծել, որ այսպիսի հրապարակային մեծարումով չէր նստեցվում խանի շնորհիվ մելիքություն ստացող մեկը։

Հին մահալական մելիքներից Հալիձորի բերդի տերերը ռուսական կառավարության ներկայացրած ցեղագրական ծառով իրենց ծագումը հասցնում էին խորին հնության։ Չի ապացուցված սակայն՝ արդյո՞ք Մելիք-Փարսադանյանների տոհմը որևէ արյունակցական կապ ունեցել է Բաղաբերդի վերջին պաշտպան թագավորական տան կամ նրա իշխանական տներից մեկի հետ։ Հաստատ է այն, որ XVIII դ. սկզբներում այդ տոհմը մեծ հեղինակություն էր վայելում Ղափանստանում և որ այդ հեղինակությունը համախմբել էր Դավիթ-Բեկի ազատագրական շարժման շուրջը հարևան մելիքների զինված ուժերը։ Ոչ միայն այդ կողմերի հայ բնակչության խտության և բազմամարդության վրա էր հույս դնում Դավիթ-Բեկը, այլև տեղական մելիքական տան ավանդական կապերի և հեղինակության վրա։ Ժամանակի մելիք Փարսադանի և նրա Բալի որդու անվերապահ մասնակցությունը Դավիթ-Բեկի ձեռնարկած գործին ապահովում էր նաև հարևան մելիքների ներգրավումը ապստամբական գործողության մեջ[18]։

Գուցե ոչ պակաս հնությամբ կարող էր իրավամբ պարծենալ Տաթևի մահալի մելիքական տունը։ Սա իր ծագումը առաջացնում էր հռչակավոր Օրբելյան իշխանական տնից, որը մի ժամանակ իր ձեռքի տակ միացրել էր գրեթե ամ-

---

[16] Այդպիսի տալաղայի մի օրինակը, որը ստացել է շահից Շահնազարյան մելիք Բաղին 1657 թ., լույս է ընծայված— «Акты, собранные Кавказскою Археографическою Комиссию», т. VI, ч. I, № 1269.

[17] Այս մելիք Հովհաննեսը և նրա մահից հետո մելիք Գալուստը թե հասարակության աչքում և թե գավառապետի մոտ մեծ հարգ ու պատիվ էին վայելում։ Գալուստի թաղմանը (1874 թ.) ներկա գտնվել իր պարտականությունն էր համարել գավառապետը իր պաշտոնյաներով։ Թաղումը կատարվեց մեծ հանդեսով՝ եպիսկոպոսի մասնակցությամբ։

[18] Մելիք Փարսադանը դավաճանությամբ սպանվեց Ագուլիսում և թաղված է այնտեղի Թաղեի վանքի պարիսպների տակ։ 1823 թ. այս տան գլխավոր կալվածքները և տոհմական ամրոցը գտնվում էին Կապանի աջակողմյան կեսում, որը մնում էր պարսկական տիրապետության ներքո։ Այս տոհմից էր մելիք Հուսեյին-Ղուլին՝ մելիք Հովհաննեսը, որը վեճի մեջ էր Նեժաֆ-բեկի հետ Կավարտ և Կատար գյուղերի համար —Могилевский и Ермолов 2-ой, Описание Карабагской провинции.